

ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ՄԱՀԻԿԻ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴՐՈՒԺԻՆԱՆԵՐԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

614

Կ-33

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԿԵՆՏԿՈՄԻ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1940

20 JUL 2010

614
4-33 պր.

ԿԱՐՄԻՐ ԽԱՁԻ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ՄԱՀԻԿԻ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴՐՈՒԺԻՆԱՆԵՐԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԿԱՐՄԻՐ ԽԱՁԻ ԿԵՆՏՐՈՆԻ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1940

20.05.2013

3448

ՀԱՍՏԱՏՎԱԾ Ե
ԿԱՐՄԻՐ ԽԱՋԻ ՅԵՎ Կ. ՄԱՀԻԿԻ
ԳՈՐԾԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
16/XI—1939 թ.

ՀԱՄԱՋՍՅՆԵՑՎԱԾ Ե
ԽՍՀՄ ԱՌԺՈՂԿՈՄՍԱՑԻ ՄՈՐ-
ԲԱԺՆԻ ՀԵՏ
19/XII—1939 թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԿԱՐՄԻՐ ԽԱՋԻ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ՄԱՀԻԿԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴՐՈՒԺԻՆԱՆԵՐԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴՐՈՒԺԻՆԱՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Սանիտարական դրուժինաները հանդիսանում են Կարմիր խաչի և Կարմիր Մահիկի ընկերության մշտական սան-ձեպվորումները և մտնում են ՏՀՈՊ-ի բուժ. սան-ծառայության կազմի մեջ:

2. Սանիտարական դրուժինաների հիմնական խընդիրներն են հանդիսանում՝

ա) ակտիվ մասնակցություն ԽՍՀՄ սանիտարական պաշտպանության ամրացման, տարերային աղետների, ինչպես նաև ողից հարձակվելու դեպքում — բնակչությանը առաջին՝ մինչ-բժշկական ոգնություն ցույց տալու միջոցով.

բ) ոգնություն Կարմիր խաչի և Կարմիր Մահիկի կազմակերպությունների կողմից ազգաբնակչության մասսաներին ինքնօգնության և փոխադարձ ոգնության պատրաստելու գործում:

3. Այդ խնդիրները կյանքում իրականացնելու համար սանիտարական դրուժինաների վրա դրվում է՝



ա) Խաղաղ ժամանակ

ա) Կարմիր խաչի և Կարմիր Մահիկի ընկերության խնդիրների ազդեցության և պրոպագանդան բնակչության մեջ՝ ԽՍՀՄ սանիտարական պաշտպանությունն ամրացնելու գործում:

բ) Տարերային աղետների ժամանակ (հրդեհ, ջրհեղեղ, յերկրաշարժ, փրկումներ և այլն) առաջին ոգնություն ցույց տալը, ինչպես նաև արտադրության մեջ և կենցաղում — դժբախտ դեպքերի ժամանակ:

գ) Մասնակցություն կուսակցության և կառավարության կողմից անկացվող բոլոր տեսակի տնտեսական-քաղաքական կամպանիաներին, ինչպես նաև Կ. Խաչի և Կ. Մահիկի կազմակերպությունները ամրացնելու ուղղությամբ տարվող բոլոր միջոցառումներին:

դ) Կարմիր խաչի և Կարմիր Մահիկի կազմակերպության և առողջապահական մարմինների կողմից աշխատանքի ու կենցաղի առողջացման և համաճարակային հիվանդությունների դեմ անցկացվող մասսայական միջոցառումների հանրամատչելի դորձնելը:

բ) Պատերազմի ժամանակ

ա) ՀՈՊ-ի պայմաններում տուժած բնակչությանը առաջին ոգնություն ցույց տալը:

բ) Եվակուացիայի յենթարկվող բնակչության սպասարկումը սանիտարական տեսակետից:

գ) Կարմիր Բանակին բժշկասանիտարական ոժանդակության (սանիտարական զնաքների բեռնաթափում և այլն) առաջադրանքների կատարումը:

2. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴՐՈՒԺԻՆԱՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

4. Սանիտարական դրուժինան բաղկացած է յերկու սանիտարական ջոկերից՝ յերեքական պատգարակային ողակներով յուրաքանչյուրում:

5. Պատգարակային ողակը բաղկացած է չորս

հոգուց, վորոնց տրվում են հերթական համարներ՝ 1, 2, 3, 4:

6. Պատգարակային ողակի առաջին համարը հանդիսանում է ողակի հրամանատարը, յերկրորդ, յերրորդ և չորրորդ համարները — հանդիսանում են շարքային դրուժինիկներ (ողակայիններ):

7. Զոկի գլուխ կանգնած է ջոկի հրամանատարը:

8. Սանիտարական դրուժինայի վարչությունը բաղկացած է սան. դրուժինայի հրամանատարից և քաղդեկից: Վարչությանը կից կան յերկու կապավորներ, վորոնցից մեկին հանձնարարվում է դրուժինայի տնտեսական մասի ղեկավարումը: Դրուժինայի կազմից առանձնացվում է քաղդեկի ոգնական:

9. Դրուժինայի ամբողջ անձնակազմը բաղկացած է 30 հոգուց, վորոնք ըստ կատեգորիաների բաժանվում են հետևյալ կերպ.

Սանդրուժինայի հրամանատար	1
Քաղդեկ	1
Կապավորներ	2
Զոկի հրամանատարներ	2
Ողակի հրամանատարներ	6
Ողակայիններ	18

Ընդամենը 30

10. Սանիտարական դրուժինաների շարքային և հրամանատարական-քաղաքական կազմին իրավունք է տրված կրելու սահմանված ձևի հագուստ և Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի գործկոմի կողմից հաստատված տարբերիչ նշաններ:

3. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴՐՈՒԺԻՆԱՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

11. Սանիտարական դրուժինաները ձևավորվում են Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի շրջանային կոմիտեների կողմից. Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի

գործկոմի պլանային առաջադրանքով, գլխավորապես ՀՈՊ-ի կետերում:

12. Յերկաթգծում և ջրային տրանսպորտում սանիտարական դրուժինաները ձևավորվում են ճանապարհային և ջրային ռայոնական կոմիտեների կողմից:

13. Տերիտորիալ սանիտարական դրուժինաների, նալած նրանց նշանակումներին, բաժանվում են՝

ա) բժշկական թաղամասերի դրուժինաների, վորոնք ձևավորվում են յուրաքանչյուր բժշկական թաղամասում մեկական հատ:

բ) Ռայոնական դրուժինաների, վորոնք կազմվում են պոնկտային քաղաքների կամ վոչ պոնկտային վայրերի ամբողջ ռայոնի աշխատանքների համար:

գ) Դրուժինաներ, վորոնք կազմվում են Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի սկզբնական կազմակերպություններին կից ձեռնարկություններում, հիմնարկներում, ուսումնական հաստատություններում, բնակելի տներում, սովխոզներում, կոլխոզներում և այլն:

14. Թաղամասային և ռայոնական դրուժինաները կոմպլեկտավորվում են վոչ որեկտային ձեռնարկների աշխատողներից, աշխատավորների բնտանիքների անդամներից, սովխոզներից և ԲԳԿՐ ու ՌՄՆ հրամանատարական կազմի կանանցից, վորոնք ապրում են և աշխատում են տվյալ դրուժինայի հավաքման վայրից մոտ ավելի 1—2 կիլոմետր ռադիուսի (հեռավորության) վրա, այն հաշվով, վորպեսզի դրուժինիկների հավաքը շուտափույթ կանչի ժամանակ փոխադրական միջոցների բացակայության դեպքում տևի 30 րպայից վոչ ավելի:

Այդ դրուժինաները հաստատվում են Կարմիր խաչի և Կարմիր Մահիկի գործկոմի նախագահության կողմից և նրանց տրվում են համամիութենական համարներ:

15. Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի սկզբնական կազմակերպություններին կից դրուժինաները կոմպլեկտավորվում են տվյալ ձեռնարկության, հիմ-

նարկության և այլնի աշխատողներից և նրանց խրնդիրն և ցույց տալ առաջին ոգնությունն իրենց ձեռնարկության տերիտորիայի սահմաններում: Այդպիսի դրուժինաները հաստատվում են Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի կենտրոնական, յերկրային ու մարզային կոմիտեների կողմից և անվանվում են իրենց հիմնարկության անունով:

16. Թաղամասային և ռայոնական սանիտարական դրուժինաների հագեցման և ուսուցման ծախսերի պահպանումը նախատեսվում է Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի ռայոնական կոմիտեների բյուջեում, իսկ ձեռնարկությունների, հիմնարկների, սովխոզների, կոլխոզների, ուսումնական հաստատությունների և ժակտերի Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի սկզբնական կազմակերպություններին կից դրուժինաների ուսուցման և հագեցման պահպանման ծախսերը ապահովում են այն հիմնարկ-ձեռնարկների կառավարությունները, վորոնց կից կազմակերպվում են սանիտարական դրուժինաները:

17. Սանիտարական դրուժինաների կոմպլեկտավորումը կատարվում է Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի կոմիտեների կողմից բանվորների, ծառայողների, սովխոզների և այլնի ընդհանուր ժողովներում անցկացվող բացատրական աշխատանքների միջոցով:

18. Սանիտարական դրուժինայի շարքերը մտնելու ցանկություն ունեցող անձինք, այդ առթիվ Կարմիր խաչի կամ Կարմիր Մահիկի ռայոնական կոմիտեին ներկայացնում են գրավոր դիմում, կցելով ինքնակենսագրություն և Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի սկզբնական կազմակերպություններից և պրոֆ. կազմակերպությունից նրանց աշխատանքի վայրից բնութագրելու: ԿՀՅՄ անդամների համար բավական է համապատասխան կոմյերիտ կազմակերպության յերաշխավորագիրը:

19. Բոլոր դրուժինա մտնողները պետք է հանձնեն ՊՍՊ-ի նորմաները:

Դրութիւնայում գրանցման յենթակա յեն բժշկական ստուգումը անցկացած և իրենց առողջութեամբ բեռնված պատգարակներով աշխատելու ընդունակ ճանաչված անձինք:

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ. Դրութիւններում չեն բույլատրվում՝

ա) յերկարութեամբ անհավասարաչափ վերջավորութիւններ ունեցող, անշարժ հոդերով և շարժման որդանների ալլ թերութիւններով անձինք.

բ) սրտի որդանական արատ ունեցողները.

գ) 2-րդ և 3-րդ ստադիայով թոքախտավոր հիվանդները.

դ) ներքին որդանների զանազան հիվանդութիւններ ունեցողներ, վորոնց ժամանակ ամեն մի ֆիզիկական աշխատանք չի թույլատրվում:

4. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՆԱՅԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՄԱՍԻՆ

21. Թաղային և ռայոնական սանիտարական դրութիւնայի հրամանատարը նշանակվում է Կարմիր Խաչի կամ Կարմիր Մահիկի ռայոնական կոմիտեի կողմից վոչ զինապարտ, քաղաքականապես ստուգված ՊՍՊ-ի 2-րդ աստիճանի ծրագրի ծավալից վոչ պակաս և սանիտարական պատրաստութիւն ունեցող և կամքն անհրաժեշտ հատկութիւններով ոժտված անձանցից: Թաղային և ռայոնական դրութիւնների հրամանատարները համաձայնեցվում են ՏՀՈՊ-ի շտաբների հետ, իսկ պոնկտային քաղաքներում՝ համապատասխան կազմակերպութիւնների հետ:

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ. 3եթե դրութիւնայի հրամանատարը ունի պահեստի բժշկական քոջ կոչում, ալդ դեպքում անհրաժեշտ է նրա թեկնածութեան համաձայնեցումը շրջիւնկոմիսարիատի հետ, նրան դրութիւնային ամրացնելու նպատակով:

22. Չեռնարկութիւնների, հիմնարկների, սովխոզների, կոլխոզների և ալլնի Կարմիր Խաչի կամ Կարմիր Մահիկի սկզբնական կոմիտեներին կից կազմակերպված դրութիւնների հրամանատարները ընտրվում են սկզբնական կազմակերպութեան կողմից և հաստատվում են Կարմիր Խաչի ու Կարմիր Մահիկի ռայկոմի, ՏՀՈՊ շտաբի կողմից:

23. Թաղային և ռայոնական սանդրութիւնների հրամանատարները հանդիսանում են Կարմիր Խաչի ու Կարմիր Մահիկի ռայոնական կոմիտեների հաստիքային աշխատողները և իրենց ամենորշա աշխատանքի բնթացքում ղեկավարվում են սանիտարական դրութիւնների կանոնադրութեամբ և Կարմիր Խաչի ու Կարմիր Մահիկի ռայկոմների նախագահների ցուցմունքներով, իսկ ոպերատիվ աշխատանքներում, պոնկտային քաղաքներում, բժշկական քաղամասի պետի ոգնականի և ՀՈՊ-ի տեսչի միջոցով յենքարկվում են ռայոնի կամ քաղի բոմ-սան ծառայութեան պետին, մնացած քաղաքներում և վոչ պոնկտային նշանակութիւն ունեցող ավաններում, ինչպես յերկաթուղային և ջրային տրանսպորտում, — յենթարկվում են անմիջապես Կարմիր Խաչի ու Կարմիր Մահիկի իրենց ռայոնական կոմիտեի նախագահին:

24. Արտադրութեան, հիմնարկային, սովխոզների, կոլխոզների, ուսումնական հաստատութիւնների, ժակտերի և ալլնի Կարմիր Խաչի ու Կարմիր Մահիկի սկզբնական կազմակերպութիւններին կից սանդրութիւնների պետերը ոպերատիվ գծով յենթարկվում են տեղական ՀՈՊ-ի ոքլեկտի պետին:

25. Սանդրութիւնայի հրամանատարը պատասխանատու յե դրութիւնիկների կադրերի ընտրութեանը, նրանց քաղաքական, սանիտարական, շարային պատրաստութեան, Կարմիր Խաչի կամ Կարմիր Մահիկի աշխատանքների և իրեն հանձնված դրութիւնայի հագեցման պահպանման համար:

26. Սանդրութիւնայի հրամանատարի պարտականութիւնների մեջ են մտնում՝

ա) սանիտարական դրուժինայի կամպլեկտավորումը Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի վերադաս կազմակերպությունների ցույց տրված անհրաժեշտ ժամկետներին:

բ) Ուսումնական և մասսայական աշխատանքների պլանների կազմումը սանդրուժինայի համար:

գ) Դրուժինիկների շարային, սանիտարական և տակտիկական պատրաստումը:

դ) Աշխատանքը դրուժինայի հրամկազմի հետ:

ե) Դրուժինայի ուսումնական հավաքների և հագեցումների պահպանման համար անհրաժեշտ շենքերի փնտրումը:

զ) Հագեցումն լրացնելու և նրանց պահպանման հսկողության հոգ տանելը:

է) Դրուժինայի ուսումնական յեկույթների կազմակերպումը շրջակայում ուսուցում անցկացնելու համար:

ը) Իր ռաշոնի սան-պոստերի պատրաստականությունը ուսումնասիրելը և նրանց ներգրավումը դրուժինայի տակտիկական պարապմունքներին:

թ) Դրուժինիկների մշտական ընդգրկումը կարմիր-խաչյան ակտիվ աշխատանքներում:

ժ) Դրուժինայի աշխատանքների նրա պատրաստության վերաբերյալ հաշվառման վարումը և հաշվետվությունները ժամանակին կազմելն ու իր ռաշոնական, տրանսպորտային կամ սկզբնական կոմիտեյին ներկայացնելը:

27. Սանիտարական դրուժինաների հրամանատարների վորակը բարձրացնելու համար Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի կոմիտեները անց են կացնում հետևյալ միջոցառումները:

ա) Սանդրուժինաների հրամանատարների պատրաստման և վերապատրաստման համար կազմակերպում են կարճատև դասընթացներ (հավաքներ):

բ) Սիստեմատիկ անց են կացնում հրամանատարական ուսուցումներ, ծանոթացնելով նրանց ՏՀՈՊ-ի բուժական ծառայության գործի կառուցվածքի բոլոր նոր կանոնների, հրահանգների հետ, հրավիրելով դրա

համար հատուկ ղեկուցողներ, յեթե դրանում կա անհրաժեշտություն:

գ) Սանդրուժինաների հրամանատարների համար վերոնր չեն կարող ներգրավված լինել հրամանատարական ուսուցման մեջ, կազմակերպում են հեռակա մեթոդական հրահանգավորում:

դ) Սանդրուժինաների բոլոր հրամանատարներին մատակարարում են համապատասխան գրականություն՝ դիտողական պիտույքներով:

28. Սանդրուժինայի ժամանակին և ճիշտ կազմակերպման համար, կոմիտեները պարտավոր են սանդրուժինայի պարապմունքների և գույքի պահպանման համար հոգ տանել սանդրուժինայի հրամանատարին տրամադրելու անհրաժեշտ հագեցում—հագուստեղեն, ուսումնական պիտույքներ և շենք:

5. ՍԱՆԴՐՈՒԺԻՆԱՆԵՐԻ ՔԱՂԱՅԻՆ ՄԱՍԻՆ

29. Ռաշոնական կամ թաղային սանդրուժինայի քաղաքական ղեկավարը առանձնացվում է ՀամԿ(բ)Կ ռաշոնական կոմիտեյի կամ տրանսպորտում՝ քաղաքների կողմից— դրուժինայի գործունեության ռաշոնում բնակվող անձանցից և պատասխանատվություն է կրում իրեն գործող դած կազմակերպության առաջ սանդրուժինայի կուսակցական-քաղաքական աշխատանքների և մարտական պատրաստության համար:

30. Սանդրուժինայի քաղղեկը մտցվում է սանդրուժինայի ղեկավարման կազմի մեջ, նրա քաղաքական ղեկավարի իրավունքներով:

31. Քաղղեկի պարտականությունների մեջ մտնում են՝

ա) Դրուժինիկների կոմպլեկտավորումը հրամանատարի հետ միասին և կուսկազմակերպության ոժանդակության ապահովումը այս խնդրում:

բ) Քաղաքական զրույցների անցկացնելը:

գ) Կազմակերպել սանդրուժինայի պատի թերթի սիստեմատիկ լույս ընծայումը:

դ) Միջոցներ ձեռք առնել սանդղութինային թերթ մատակարարելու գործում:

յե) Կազմակերպել սոցմրցում և ղեկավարել այն սանջոկերի, սանոդակների և առանձին դրուժինիկների միջև:

զ) Կազմակերպել սանդղութինայի կուլտուր-լուսավորական աշխատանք սանդղութինայի անձնական կազմի ընդհանուր կուլտուրական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ, ինչպես նաև ոժանդակել դրուժինիկների միջոցով կարմիրխաչյան աշխատանքները ծավալելուն:

ե) Սանդղութինայի հրամանատարի հետ միասին ուսումնասիրել դրուժինայի անձնակազմը, դրուժինիկների աշխատանքի և կենցաղի պայմանները, անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել վերացնելու դրուժինիկների մաղմանն առիթ ծառայող, և սանդղութինայի պատրաստման հաջող ընթացքի ու հասարակական աշխատանքների վրա բացասաբար ազդող պատճառները:

ը) Սանդղութինայի հրամանատարի հետ միասին լավագույն դրուժինիկներին առանձնացնել հրամանատարական պաշտոններում:

թ) Դրուժինայի կոմյերիտականների թվից ջոկել և ներկայացնել ՀամԼԿՅՅՄ ռալոնական կազմակերպության հաստատմանը քաղղեկի ոգնականի թեկնածությունը և դաստիարակել նրան վորպես ապագա քաղղեկի:

32. Քաղղեկն իր աշխատանքներում սանդղութինայի մասին հաշվետու չե լինում Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի ռալոնական կոմիտեի և տեղի կուսակցական կազմակերպության առաջ:

6. ՍԱՆԴՐՈՒԺԻՆԱՅԻ ՔԱՂՂԵԿԻ ՈԳՆԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

33. Քաղղեկի ոգնականը հաստատվում է ԼԿՅՅՄ ռալոնական կոմիտեի կամ տրանսպորտում՝ քաղբաժնի կողմից դրուժինայի կազմի մեջ մտնող կոմյերի-

տուհիների թվից, անկախ նրա դրուժինայում դբաղեցրած պաշտոնից:

34. Քաղղեկի ոգնականի պարտականությունների մեջ է մտնում քաղղեկին ոգնություն ցույց տալը, նրա բոլոր աշխատանքներում և քաղղեկի փոխարինումը վերջինիս բացակայության ժամանակ:

7. ՍԱՆԴՐՈՒԺԻՆԱՅԻ ԶՈԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՄԱՍԻՆ

35. Սանիտարական դրուժինայի ջոկի հրամանատարը առաջ է քաշվում կամքի անհրաժեշտ հատկություններով ոժոված լավագույն դրուժինիկներից և հաստատվում է այդ պաշտոնում սանդղութինապետի և քաղղեկի կողմից:

36. Զոկի հրամանատարը չենթարկվում է անմիջականորեն սանդղութինայի հրամանատարին և քաղղեկին:

37. Զոկի հրամանատարը պատասխանատու չե ջոկի անձնակազմի պատրաստության, քաղբարոյական դրուժյան, ջոկի կարգապահության, ինչպես նաև ջոկին հանձնված գույքի պահպանման համար:

38. Սանդղութինայի ջոկի հրամանատարը, յուրաքանչյուր անգամ դրուժինայի հրամանատարի համաձայնությամբ կարող է իր ջոկի համար անցկացնել ինքնուրույն ուսուցում:

39. Զոկի հրամանատարը տանում է հաշվառում իր ջոկի ողակալիների ներկա լինելու և հասարակական աշխատանքների վերաբերյալ, վորի մասին տանորյակը մեկ անգամ ղեկուցում է սանդղութինայի հրամանատարին:

8. ՍԱՆՈՂԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՄԱՍԻՆ

40. Սանողակի հրամանատարը առաջ է քաշվում լավագույն դրուժինիկների թվից ջոկի հրամանատարին ներկայացման միջոցով և հաստատվում է դրուժինայի հրամանատարի ու քաղղեկի կողմից:

41. Սանդղակի հրամանատարը անմիջականորեն յենթարկվում է իր ջոկի հրամանատարին:

42. Սանդղակի հրամանատարը պատասխանատու չէ ողակի կարգապահության և քաղաքացիական գրու-թյան, ինչպես նաև ողակի նյութական մասի վիճակի համար:

43. Ողակի շարային և տակտիկական պատրաս-տումը, հրամանատարը անցկացնում է ջոկի հրամա-նատարի ղեկավարությանը:

9. ԴՐՈՒԺԻՆԱՅԻ ՏՆՏԵՍՎԱՐԻ ՄԱՍԻՆ

44. Դրուժինայի տնտեսության վարումը — դրու-ժինայի հրամանատարի կողմից հանձնարարվում է տնտեսական ընդունակություններ ունեցող կապավոր-ներից մեկին:

45. Դրուժինայի տնտեսության վարիչը յենթարկ-վում է դրուժինայի հրամանատարին և քաղցկին և անցնում է ընդհանուր ու հատուկ պատրաստում, բո-լոր դրուժինիկներին հավասար:

46. Դրուժինայի տնտեսավարի պարտականություն-ների մեջ են մտնում՝

ա) հսկողություն դրուժինայի գույքի պահպանման վրա.

բ) դրուժինիկներին գույք բաց թողնելու կազմակեր-պումը, ինչպես դրուժինայի ուսումնական, նույնպես և մարտական հավաքների ժամանակ.

գ) դրուժինիկներից գույքի ընդունումը հավաքներ վերջացնելուց հետո:

10. ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴՐՈՒԺԻՆԱՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՍԻՍՏԵՄԸ

ա) Բաղ. պատրաստում

47. Սանիտարական դրուժինայի քաղաքական պատրաստումը անց է կացվում Կարմիր խաչի ու Կար-

միր Մահիկի գործկոմի կողմից հաստատված հատուկ ծրագրով: Բացի այդ, քաղաքական դաստիարակու-թյունը անց է կացվում քաղինֆորմացիաների, թեր-թերի ու գեղարվեստական գրականության կոլեկտիվ ընթերցումների, պատի թերթերի սխտեմատիկ լույս ընծայման և այլնի միջոցով:

բ) Սանիտարական պատրաստում

48. Սանիտարական պատրաստումը անց է կաց-վում Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի գործկոմի կողմից հաստատված ծրագրով՝ դրուժինայի ընդհանուր պարապմունքներում, ինչպես նաև ջոկերում և ողակ-ներում ամիսը 5 անգամից վոչ պակաս: Դիտավոր ու-շադրությունը պետք է դարձված լինի գործնական հմտության, յուրացման, անձնական պաշտպանության միջոցների տիրապետման տակտիկական աշխատանք-ների վրա:

49. Դրուժինաների հրամանատարական կազմը պետք է հմտություն ձեռք բերի պարզ և հստակ կեր-պով տալ կարգադրություններ, կարողանա բաշխել աշխատանքը ջոկերի և ողակների միջև և ղեկավարել իր ստորաբաժանումը մարտական պայմաններում:

50. Դրուժինայի անձնակազմը պետք է տիրապե-տի հետևյալ գիտելիքներին ու հմտություններին.

ա) Իմանալ Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի ըն-կերությունների խնդիրները:

բ) Ուսումնասիրել սանիտարական-քիմիական պաշտ-պանության հարցերը:

գ) Ուսումնասիրել ոչախում տարվելիք աշխատանքի տակտիկական:

դ) Ձեռք բերել հմտություն տրավմատիկներին և ԹՆ վնասվածներին առաջին ոգնություն ցույց տալու գործում:

ե) Ունենալ հասկացողություն համաճարակային հիվանդությունների և նրանց դեմ պայքարելու միջո-ցառումների մասին:

դ) Ձեռք բերել համություն տուժածներին փոխադրելու գործում:

զ) Շարային և ֆիզիկական պատրաստում

51. Սանդրուժինային շարային պատրաստումը պետք է անբաժանելիորեն կապված լինի դրուժինիկների ֆիզիկական վարժությունների հետ, նպատակ ունենալով պատրաստելու նրանցից դիմացկուն մարդիկ, վերջինք ունենան տուժածներին պատգարակի վրա դնելու և փոխադրելու աշխատանքի համություն. կարողանան հակազդելու և հագեցումներով հաղթահարել ցանկապատերի և փոսերի նման արգելափակոցները, ինչպես նաև կարողանալ պատգարակով առաջ շարժվել վազքով կամ սողալու միջոցով և ծավալվել վորպես սանփոցխային շարք:

52. Շարային պատրաստումը անց է կացվում սանդրուժինայի հրամանատարի, ջոկերի և ողակների հրամանատարների կողմից ուսման պլանով հատկացված ժամերին և ուսումնական բոլոր յեղութների ժամանակ: Սանիտարական դրուժինայի ընդհանուր շարային պատրաստման ժամանակ սահմանվում են հետևյալ շարքավորումները և կամանդաները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ

1) Շարք կոչվում է ողակայինների և ստորաբաժանումների ճիշտ տեղավորումը նրանց շարժումների և գործողությունների համառոտ դասավորման համար:

2) Տողան է կոչվում այն շարքը, յերբ ողակայինները կանգնած են մեկը մյուսի կողքին մի գծի վրա:

3) Յերկտողանի շարք է կոչվում այն դասավորումը, յերբ մի տողանը ծոծրակով կանգնած է մյուսի հետևը մեկ քայլ տարածություն վրա: Այդ ժամանակ տողանները կոչվում են առաջին և 2-րդ. շարքի շրջադարձի ժամանակ տողանների անվանումները չեն փոխվում:

4) Կողք կողքի կոչվում է այն շարքը, յերբ յերկու ողակայիններ կանգնած են ծոծրակի դեմ առ դեմ պարզած ձեռքի տարածության վրա:

Շարքը կոչվում է վոչ լրիվ, յեթե առաջին տողանի ողակայինների հետևում չկան յերկրորդ տողանի ողակայինները: Փակ շարք կոչվում է այնպիսի շարքը, յերբ ողակայինները դասավորված են մեկը մյուսից արմունկների միջև ձեռնափի լայնությամբ:

5) Բաց ազատված շարք կոչվում է այնպիսին, յերբ ողակայինները հրամանատարի հրամանով դասավորված են մեկը մյուսից վորոշ հեռավորության վրա (որինակ, յերամաձև սանիտարական շարքերը):

6) Յլանգ (թեվ) կոչվում է շարքի կողքի վերջավորությունը (աջից կամ ձախից), թեվի անվանումը շարքի շրջադարձի ժամանակ չի փոխվում:

7) Ճակատ է կոչվում շարքի այն կողմը, վոր կողմը ողակայինները դարձած են յերեսով, ունենալով աջ թևը — աջ կողմից և ձախը՝ ձախ կողմից:

8) Թիկունք ձակատի հակառակ կողմն է:

9) Հեռակայություն (դիստանցիա) — կոչվում է ստորաբաժանումների կամ ողակայինների միջև դեպի խորքը տանող տարածությունը, հետևի տողանից կամ ողակայինից առաջը կանգնած մինչև առաջին տողանը կամ ողակայինը:

10) Կանգնած հետևից միջանց (ինտերվալ) է կոչվում ձակատի հարևան և ստորաբաժանումների կամ ողակայինների միջև յեղած տարածությունը:

11) Սյունաշարք է կոչվում այն շարքը, վորի խորքը ավել է նրա լայնքից կամ հավասար է նրան:

12) Սյունաշարքի գլուխ է կոչվում առջևում գտնվող ստորաբաժանումը, իսկ պոչը՝ սյունաշարքի այն մասը, վորը գտնվում է վերջում:

13) Ուղղապահ կոչվում է — առաջադրված ուղղությամբ շարժվող ողակայինը կամ հրամանատարը,



շարահավակ կոչվում է սյունաշարքի պոչից շարժվող ուղակայինը:

14) Շարքի ղեկավարումը իրականացվում է դրուժինայի, ջոկի կամ ողակի հրամանատարի կողմից ձայնով կամ ազդանշանով: Շարքը ղեկավարելու համար, հրամանատարը գտնվում է այնտեղ, վորտեղից իրեն հարմար է հրամաններ տալ և վորտեղ նրան կարող են տեսնել ու լսել:

15) Հրամանները բաժանվում են նախնականի և կատարողականի, որինակ, քայլով-մարշ, բարձրացրու և այլն:

Նախնական հրամանը տրվում է բարձր, պարզ ու յերկարաձգորեն, վորպեսզի շարքում յեղածները հասկանան թե ինչպիսի գործողություններ է նրանցից պահանջվում (քայլո... կամ բարձրա...): Կատարողական հրաման տրվում է կարճ լռությունից (պառուզայից) հետո, բարձր և յեռանդուն (մարշ, կամ... ցրում):

16) Դրանց հետ միասին կան նաև միայն կատարումը ցույց տվող հրամաններ՝ «Առաջ», «Զգաստ» և այլն:

17) Վոչ ճիշտ կատարումը ուղղելու կամ ընդունումը կրկնելու համար տրվում է հրաման «Թողնել»: այդ հրամանի վրա ընդունվում է այն դրությունը, վորը կար մինչև հրամանը:

ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻ ՅԵՎ ՈՂԱԿԱՅԻՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՐՔՈՒՄ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

18) ա) Շարքում բոլորը պարտավոր են պահպանել լիակատար լռություն և ուշադրություն:

բ) Առանց թույլտվության դուրս չգալ շարքից:

գ) Փակ շարքում նայել ուղիղ առաջը, ա-

ռանց լարվելու, շարժվել համաքայլ և ուղղվել ճակատով ու շարքերում:

դ) Լինել նշված հագուստի և հանդերձանքի մեջ:

19) Ստորաբաժանումների հրամանատարների պարտականությունները շարքավորումից առաջ—

ա) Ստուգել իր ստորաբաժանման ողակայինների առկայությունը:

բ) Ստուգել հագեցման առկայությունը և նրա սարքին լինելը:

Շ ա Ր Ֆ Ի մ ե ջ

ա) Հրամանների ճիշտ կատարումով յենթականերին տալ որինակ:

բ) Հետևել յենթակաների կողմից հրամանները ճիշտ կատարելուն:

20) Ողակայինների պարտականությունները շարքավորումից առաջ ստուգել իր հանդերձանքը և հագեցման սարքին լինելը:

Շ ա Ր Ֆ Ի մ ե ջ

ա) Իմանալ իր տեղը շարքում և կարողանալ արագ կերպով, առանց իրարանցման, զբաղեցնելու այն:

բ) Ուշադիր լինել դեպի իր հրամանատարի հրամաններն ու ազդանշանները և արագ կերպով կատարել այդպիսին:

21) Սանդրոժինաների աշխատանքների ժամանակ կիրառվող հրամանները—

1) «Ողակ կանգնիր»— կիրառվում է ողակը մի տողանի շարքավորելու ժամանակ, ըստ վորում ողակի հրամանատարը կանգնում է զգաստ դրությամբ, ճակատի շարքավորումը ցույց տալու համար պարզում է մի կողմ ձախ ձեռքը և իսկույն իջեցնում այդ, ողակը շարվում է հրամանատարի ձախ կողմից տողանով, իրենց համարների կարգով:

2) «Զոկը ըստ ողակների»— կանգնիր» հրամանով,

ճակատի ուղղութիւնը տալիս ե ջոկի հրամանատարը և նրա մոտ, ձախից շարվում են ողակները ըստ իրենց հերթական համարների (1, 2 և 3):

3) «Դրուժինա ըստ ջոկերի— կանգնիր» հրամանով ճակատի ուղղութիւնը տալիս ե դրուժինայի հրամանատարը և նրա մոտ ձախից շարվում են ջոկերը սկսած մեկից:

4) Ճակատն ուղղելու համար տրվում ե հրաման «Հավասարվելով», բոլոր ողակայինները, բացի աջ թևավորից (ֆլանգից) գլուխները շուտ են տալիս դեպի աջ և հավասարվում են աչնպես վորպեսզի տեսնեն 4-րդի կործքը, հաշվելով իրեն առաջինը:

5) «Ձգաստ» հրամանով, բոլոր ողակայինները գլուխները շուտ են տալիս ուղիղ և դադարեցնում բոլոր տեսակի շարժումները:

6) «Ազատ»— հրամանը թույլ ե տալիս կանգնել ազատ, բայց չթուլացնելով ուշադրութիւնը:

7) Մի տողանու ձեւով շարված սանդրուժինայի անձնակազմը հաշվելու համար տրվում ե հրաման ըստ կարգի— համրիր»:

Հաշվարքը սկսվում ե աջ թեւից և յուրաքանչյուր ողակային ասում ե իր հերթական համարը, շուտ տալով ձախից իր գլուխը դեպի իր հարեւան ողակայինը:

8) Հրաման,— «1, 2— համրիր» կատարվում ե ինչպես և նախորդը:

9) Շրջադարձերը կատարվում են հրամաններով «աջ դարձ», «ձախ դարձ», «հետ դարձ», ըստ վորում «աջ դարձ» շրջադարձը կատարվում ե աջ կրնկի և ձախ վորտքի թաթի վրա, իսկ «ձախ դարձ» և «հետ դարձ» շրջադարձերը ձախ կրնկի և աջ վորտքի թաթի վրա: Շրջադարձը կատարվում ե յերկու տակտով՝ սկզբից շրջում ե համապատասխան կողմի վրա մարմնի բուն մասը, իսկ հետո, կցվում ե հետեւում մնացած վորտքը:

10) Ողակի, ջոկի կամ դրուժինայի շարժումը սկսվում ե ձախ վորտքից «Քայլով մարշ» հրամանով,

ըստ վորում նախնական «քայլով մարշ» հրամանի ժամանակ մարմնի բուն մասը թեթևակիորեն առաջ ե նետվում, պահպանելով սակայն: համառ հավասարակշռութիւն, իսկ իսկական շարժումը սկսվում ե «Մարշ» կատարողական հրամանի ժամանակ: Մարշի ուղղութիւն փոփոխութիւնը կատարվում ե «Աջ», «Ձախ» և «Ուղիղ» հրամաններով:

11) Շարժումը դադարեցնելու համար տրվում ե «Կանգնիր» հրամանը: Շարժումը դադարեցնելու ժամանակ նախնական հրամանը հանդիսանում ե ստորաբաժանման անունը (ողակ, ջոկ, դրուժինա— «Կանգնիր»):

Կատարողական հրամանը ստանալու ժամանակ արվում ե ևս մի քայլ և կցվում ե վորտքը:

12) Շարժման արագութիւնը փոխելու համար տրվում են հրամաններ— «Լայն քայլ» և «Կարճ քայլ», «Արագ քայլ» և «Դանդաղ քայլ», իսկ վազքի անցնելու համար տրվում ե հրաման «Վազքով մարշ»:

Սանդրուժինաներում տրվող հատուկ հրամաններին են վերաբերվում հազեցման հետ գործողութիւն պահանջող և տուժածներին փոխադրելու հետ կապված հրամանները:

Դրանց են վերաբերվում՝

13) «Վերցնել պատգարակները», «Բաց անել պատգարակները», «Փակել պատգարակները», «Իջեցնել պատգարակները»:

14) Հակազազերի մարտական դրութիւն բերելը կատարվում ե «Դազեր» հրամանով: Հակազազերը հանվում են «Հանել հակազազերը»— հրամանով:

15) Տուժածին պատգարակի վրա բարձրացնելու համար տրվում ե հրաման «Հիվանդի մոտ»: Այդ հրամանի համաձայն 2-րդ, 3-րդ և 4-րդ ողակայինները տեղավորվում են տուժածի այն կողմը, վորտեղ չկա վնասված կամ վերք, ըստ վորում 2-րդ համարը տեղավորվում ե տուժածի գլխի մոտ, 3-րդը՝ տուժածի իրանի մեջտեղում և 4-րդ վորտքերի մոտ: Ողա-

կի հրամանատարը պատգարակներով տեղավորվում է տուժածի այն կողմը, վորտեղ գտնվում է վերքը:

16) Տուժածին բարձրացնելը և նրան պատգարակի վրա դնելը կատարվում է յերեք նվազով՝ 1) «վերցնել» հրամանով 2-րդ, 3-րդ և 4-րդ համարները շտրում են մի ծնկի վրա, իրենց ձեռքերը անց են կացնում տուժածի իրանի տակ, աչնպես վոր 2-րդը բռնում է գլուխը և թիկունքը, 3-րդը՝ մեջքը և կոնքը, և 4-րդը՝ վորտքերը: Ձեռները այդ ժամանակ անց են կացվում մինչեւ արմունկները: 2) «Բարձրացրու» հրամանի ժամանակ — յերեքն եւ ընդհանուր ուժերով տուժածին բարձրացնում են իրենց շոքած ծնկան վրա, իսկ հրամանատարը ողակայինների վորտքերին է մոտեցնում պատգարակը թեթևակի բարձրացնելով իր կողմը: 3) «Դնել» հրամանի դեպքում յերեք ողակայինները տուժածին իջեցնում են պատգարակի վրա, իսկ հրամանատարը խնամքով իջեցնում է պատգարակը իր բարձրացրած կողմը:

17) «Պատգարակի մոտ» հրամանի դեպքում 2-րդ համարը կանգնում է պատգարակի գլխավերեք, 4-րդը՝ վորտքերի վերջավորության, իսկ 3-րդը և հրամանատարը մնում են պատգարակի մեջտեղի մոտ — յորաքանչյուրը իր կողմից: Դուրս բերելու ուղղությունը բոլորն ընդունում են ըստ ողակի հրամանատարի:

18) Բեռնավորված պատգարակի բարձրացումը կատարվում է յերկու հրամանով.

ա) «վերցնել պատգարակները» — բոլորը բռնում են պատգարակի համապատասխան տեղերից (2-րդ և 4-րդ համարները — կոթերից, 3-րդը և հրամանատարը՝ ձողերի մեջտեղից):

բ) «Բարձրացնել պատգարակները» — բոլորը միաժամանակ բարձրացնում են պատգարակները:

19) Պատգարակներով շարժումը կատարվում է «վոչ համընթաց քայլով մարշ» հրամանով:

20) Տուժածների և ԹՆ վարակվածների փոխա-

դրման ժամանակ, պատգարակները գլխի կողմով շարժվում են առաջ. այդ դրությամբ յերեք ողակայինները առաջին, յերկրորդ և յորրորդ հեշտությամբ կարող են հետեւել տուժածի դրությանը և արագ կերպով ցույց տալ նրան ոգնություն, յեթե դա հարկավոր գա:

21) Սար կամ աստիճան բարձրանալու ժամանակ պատգարակները գլխի կողմով շարժվում են առաջ, այդ ժամանակ պատգարակների վորտքերի կողմը բարձրացվում է մինչեւ 4-րդ ողակայինի ուսերին հավասար: Սարից կամ աստիճանից իջնելիս պատգարակները վորտքերի կողմով շարժվում են առաջ, վորը այդ ժամանակ նույնպես բարձրացվում է 4-րդ ողակայինի ուսերին հավասար:

Պատգարակների ծայրամասերի բարձրացումը մինչեւ ողակայինի ուսերին հավասար կատարվում է կողքերից գնացող 3-րդի և 4-րդի ոգնությամբ:

Շարժում քարեվելու համար տրվելիք հրամանը.

22) Անմիջապես պետերին վորջոնելու համար Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի ռայկոմի, յերկոմի, մարզկոմի, կենտկոմի նախագահ, ռայկոմի ՀՈՊ-ի տեսչի կամ թաղամասի պետի ոգնականի, ինչպես նաև Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի վերադաս կոմիտեների տեսչության կողմից տրվում է հրաման «Զգաստ» և ուղղություն դեպի աջ (ձախ, մեջտեղ):

Այդ հրամանի ժամանակ բոլոր ողակայինները և հրամանատարները ընդունում են «Զգաստ» դրություն, իսկ հրաման տվող հրամանատարը մոտենում է յեկողին և կանգնելով նրանից յերեք քայլ հեռու, զեկուցում է հավաքված դրոժինիկների թվի և սան-ձեվավորման շարժման նպատակի մասին:

«Ընկեր» (նախագահ, տեսուչ և աշխ) սանդուղ-ժինան բաղկացած է 26 հոգուց, շարված է տակտիկա-

կան պարապմունքներ անցկացնելու համար: Դրուժինայի հրամանատար— Իվանովա:

23) Յեթե յեկողը բարեւում է սան-ձեւավորման հետ— այդ դեպքում ողակայինները պատասխանում են «Բարեւ ձեզ», զնալու դեպքում պատասխանում են «Յտեսություն»:

24) Յեկող պետից շնորհակալություն ստանալու դեպքում— ողակայինները պատասխանում են— «Մառայում ենք խորհրդային Միությանը»:

25) Դրուժինայի դասարանական պարապմունքների անմիջական պետի հաճախման դեպքում— դրուժինայի հերթապահը տալիս է հրաման «Ուշադրություն— կանգնել», իսկ դրուժինայի հրամանատարը կամ դասատունը ղեկուցում է յեկողին ինչ պարապմունք է անցկացվում:

11. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ, ԴՐՈՒԺՆԻԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ՈՒ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՆ ՊԱՆՍՏԸ (ՌԵՋԵՐՎԸ) ԱՆՅԿԱՅՆԵԼԸ

53. Սանդրուժինայի ուսման ծրագիրը հաշված է 10 ամսվա համար՝ վեցորդակը մեկ անգամ—3 ժամյա պարապմունքով, այսինքն ընդամենը 150 ժամ: Ուսման տարին սկսվում է նոյեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը, մեկ ամիս ընդմիջումով ամառային արձակուրդների ժամանակ:

Հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը ժամանակամիջոցը տրվում է շրջկոմներին— դրուժինիկների բնորոշության և նրանց ՊԱՍՊ-ի առաջին աստիճանի նորմաներով պատրաստելու համար:

Յուրաքանչյուր պարապմունք բաղկացած է մեկ ժամ քաղ. պատրաստումից և յերկու ժամ մասնագիտական պարապմունքներից (սանիտարական, շարային և տակտիկական):

Դրուժինիկների ուսուցումը պետք է անցկացվի գլխավորապես ուղիղում գործնական վարժությունների

տակտիկայից տուժածների փոխադրման և բուժ. հիմնարկներում հիվանդներին ցույց տրվելիք խնամքի անմիջական պարապմունքների ճանապարհով:

54. Ուսումը ավարտած դրուժինիկներն ամսական հաշվառման մեջ են գտնվում Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի ընկերության ռաշոնական (ճանապարհային կամ ջրային) կոմիտեյում և յեռամսյակը մեկ անգամ առանց արտադրությունից կտրվելու կանչվում են յերեքորդա կրկնողական հավաքի, կոմիտեյում պետք է լինի նրանց համար հագեցման և հանդերձանքի պահեստի ֆոնդ:

55. Քննությունները հանձնած բոլոր դրուժինիկները ստանում են կրծքանշան կրելու իրավունք:

56. Բնակավայրը փոխելու և այլ քաղաք կամ շրջան տեղափոխվելու դեպքում— դրուժինիկը իր ռաշոնական կոմիտեյում հանվում է հաշվառումից և յերազմունք ունի նոր բնակավայրում գրանցվելու Կարմիր խաչի և Կարմիր Մահիկի ռաշոնական կոմիտեյին կից դրուժինիկների պահեստում: Պահեստի գրանցումը կատարվում է դրուժինիկի կողմից ներկայացվող անձնական գրքույկի հիման վրա:

57. Պահեստում գտնվող դրուժինիկները կարող են Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի ռաշոնական կոմիտեյի կողմից կանչվել շտապ հավաքի, զանազան տեսակի տարերային աղետների կամ ավարիայի ժամանակ— և աշխատանք անցկացնելու կամ ՏՀՈՊ— տեղական շտաբի կարգադրության համաձայն:

Պատերազմի ժամանակ, պահեստում յեղած դրուժինիկները «ՈՏ» ազդանշանի դեպքում պարտավոր են ներկայանալ դրուժինայի հավաքման վայրը:

12. ԿԱՊԻ ԿԱԶՄԱԿԵՐՐՈՒՄԸ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴՐՈՒԺԻՆԱՆԵՐՈՒՄ

58. Ուսումնական յելույթների, արշավի ժամանակ կապը դրուժինայի վարչության և նրա ջոկերի միջեզ պահպանվում է կապավորների միջոցով:

Գրութիւնայի արագ հաւաք ապահովելու համար, հրամանատարի կողմից մշակվում ե ողակայինների, ինչպես ըստ աշխատանքի վայրի նույնպես և ըստ բնակավայրի— հայտնելու կարգը, ծանուցում հաւաքի մասին կարող ե անցկացվել հեռախոսով կամ ծանուցագիր ուղարկելու միջոցով, իսկ ՀՈՊ-ի ընդհանուր պարապմունքների ժամանակ ծանուցման համար ծառայում ե «ՈՏ» ազդանշանը:

59. Տագնապի կապակցութեամբ դրութիւնայի հաւաք կարող ե կայացվել ծանուցագրեր ուղարկելու միջոցով:

1) Դրութիւնայի հրամանատարի կամ քաղղեկի կողմից ուսումնական վարչութիւնների համար, 2) Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի ռայլոնական կոմիտեի նախագահի, պոնկտային քաղաքների կամ վերադաս կոմիտեների ՀՈՊ-ի տեսուչների կողմից, սակայն յուրաքանչիւր անգամ վերստուգումների ժամանակ հաւաքը անցկացնելու մասին, միաժամանակ հայտնելով Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի ռայլոմի նախագահին:

13. ՍԱՆԴՐՈՒԹԻՆԱՅԻ ՀԱԳԵՅՈՒՄԸ

60. Սանդրութիւնայի, ինչպես ուսումնական, նույնպես և պահեստային հագեցումը բաղկացած ե՝

ա) Անձնական պաշտպանութեան միջոցներից (հակագազեր և Կ. Թն.-ից պաշտպանակնն հագուստ, անհատական վիրակապային և հակաքիմիական ծրարներ):

բ) Առաջին ոգնութիւն ցույց տալու առարկաներից (հակագազեր տուժածների համար, սանիտարական պայուսակներ, պատգարակներ, և գ) տնտեսական նշանակութիւն ունեցող առարկաներից (նավթի և ելեկտրական լապտերներից, տափաշէից, փոկից, դրոշից):

61. Ընդամենը դրութիւնային ըստ աղյուսակի հասնում ե՝

1) Հակագազեր 42 հատ (նրանցից 30 հատ դրութիւնայի անձնակազմին և 12 հատ պահեստային՝ տուժածների համար):

2) Սան-պայուսակ (հագեցումով) 6 հատ

3) Պատգարակներ 6 »

4) Փոկեր 12 »

5) Նավթի լապտեր («Լետուշայա միշ») 6 »

6) Ելեկտրո լամպեր 12 »

7) Տափաշէի ջրի համար 6 »

8) Ազդադրոշներ 6 »

9) Անհատական վիրակապային ծրարներ 30 »

10) Հակաքիմիական ծրարներ 30 »

11) Պաշտպանական հագուստ 30 »

62. Սանդրութիւնայի սան պայուսակի հագեցումը բաղկացած ե՝

1) Անհատական վիրակապային ծրարներից 10 հատ

2) Ռետինե կամ կտորի ժգուտից 3 »

3) Ֆաներային շիններից 3 զույգ

4) Կտորի լաշակներից 3 հատ

5) Մաուլաի բինտերից 14 սմ լայն 5 »

6) Հասարակ բամբակից 200 գրամ

7) Բամբակյա գնդիկներից փայտե ձողիկների վրա (կամ մեկ հակաքիմիական ծրար). 20 հատ

8) Բենզին 100 գրամ

9) Նաշադիրնի սպիրտ 30 »

10) Պղնձարջասպի 5 տոկոսանոց լուծույթ 100 »

11) Յոդ ամպուլների մեջ 10 »

12) Ալգեգործական դանակ 1 հատ

13) Անվտանգ քորոցներ 10 հատ

63. Սանդրուծինայի հանդերձանքը բաղկացած է՝
1) Բանվորական կոմբինիզոնից . . . 30 հատ

2) Բերետներից 30 »

3) Կոշիկներից 30 զույգ

64. Հազեցումը և հանդերձանքը սանդրուծինայի
անձնակազմի միջև բաշխվում է հետեվյալ կերպ.

Ա) ՀԱԳԵՑՈՒՄ

1) Դրուծինայի հրամանատար և քաղաքի

Անձնական հակազազեր, ԿԹՆ-ից պաշտպա-
նող հագուստ և զրպանի ելեկտրոլապտերներ:

2) Զոկի հրամանատարներ—

Անձնական հակազազեր, ԿԹՆ-ից պաշտպանող
հագուստներ և զրպանի ելեկտրոլապտերներ:

3) Կապավորներ—

Անձնական հակազազեր, ԿԹՆ-ից պաշտպանող
հագուստներ և զրպանի ելեկտրոլապտերներ:

Սանդրակներ.—

ա) Ողակի հրամանատարը—

Անձնական հակազազ, սանալայուսակ, ելեկտրո
լապտեր և պաշտպանող հագուստ:

բ) 2-րդ ողակայինը—

Յերկու հակազազ և պաշտպանող հագուստ:

գ) 3-րդ ողակայինը—

Անձնական հակազազ, պատգարակներ: տափաշիշ
և պաշտպանող հագուստ:

դ) 4-րդ համարը—

Յերկու հակազազ, պաշտպանող հագուստ և նավ-
թալապտեր:

Ամբողջ անձնակազմին մեկական-անհատական
վիրակապային և հակաքիմիական ծրարներ:

Բ) ՀԱՆԴԵՐՁԱՆՔ

Ամբողջ կազմին բանվորական հագուստ, բաղկա-
ցած՝ բանվորական կոմբինեզոնից, բերետից և կո-
շիկներից:

65. Հազեցումն իր վրա կրելու համար սահման-
վում է հետեվյալ կարգը՝

Անձնական հակազազեր—

Ձախ կողքի վրա փոկով անցկացրած աջ ուսի
վրայով:

Պահեցու հակազազեր—

Աջ կողքի վրա, փոկով անցկացված ձախ ուսի
վրայով— անձնական հակազազի փոկի վերեվից:

Սանիտարական պայուսակներ.—

Աջ կողքի վրա— փոկով անցկացված ձախ ուսի
վրայով անձնական հակազազի փոկի վերեվից:

Տափաշիշ ջրի համար—

Աջ կողքի վրա, փոկով ձախ ուսի վրայով անձնական հակազազի փոկի վերեվից:

Փոկեր պատգարակների համար—

Ամրացվում են անմիջականորեն պատգարակներին:

Ելեկտրական լապտերները, անհատական վիրահատային և հակաքիմիական ծրարները բանվորական կամ պաշտպանող հագուստի գրպաններում:

Պատգարակները և նավթալապտերները համապատասխան ողակայինների ձեռքերում:

66. Դրուժինայի հագեցման և հանդերձանքի վերաբերյալ փոփոխությունը կատարվում է միայն Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի գործկոմի կարգադրության համաձայն:

14. ԽՐԱՆՈՒՍԱՆՔՆԵՐԻ ՅԵՎ ՏՈՒԺՆԵՐԻ ԿԱՐԳԸ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴՐՈՒԺԻՆԱՆԵՐՈՒՄ.—

67. Դրուժինիկների գերազանց պատրաստման համար խրախուսումների միջոցներին են վերաբերում՝

ա) Բանավոր շնորհակալություն— շարքի առաջ:

բ) Դրուժինայի հրամանատարության շնորհակալությունը ընթերցվում է շարքի առաջ:

գ) Պարգևատրում հատուկ պատվոգրերով:

դ) Շնորհակալության հրապարակումը ընդհանուր և կարմիր խաչյան մամուլում:

68. Բանավոր շնորհակալություն հայտնելու իրավունքը տրվում է ողակայինների հրամանատարներին, ջոկի հրամանատարներին, սանդրուժինայի հրամանատարներին և քաղղեկին:

Սանդրուժինայի հրամանագրով շնորհակալություն հայտնելու իրավունքը տրվում է սանդրուժինայի հրամանատարին և քաղղեկին: Սանդրուժինայի շարքային

և հրամանատարա-քաղաքական կազմին պատվոգրով պարգևատրելու և շնորհակալությունը մամուլում հրապարակելու իրավունքը տրվում է Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի վերադաս կոմիտեների Կարմիր խաչի և Կարմիր Մահիկի ռայոնական կոմիտեյի միջնորդությանը:

69. Սանիտարական դրուժինայի տուժերի միջոցներին են վերաբերում՝

1) Նկատողություններ:

2) Բանավոր նկատողություն կամ հրամանով շարքի առաջ:

զ) Խիստ նկատողություն նախազգուշացումով դրուժինայի հրամանով:

դ) Խիստ նկատողություն հրամանով:

յե) Հեռացում սանդրուժինայի շարքերից:

70. Նկատողություն անելու իրավունք տրվում է ողակայինների ջոկերի հրամանատարներին, սանդրուժինայի հրամանատարներին և քաղղեկին: Բոլոր տեժակի նկատողությունները բանավոր և հրամանով հայտարարելու իրավունքները տրվում է սանդրուժինայի հրամանատարներին և քաղղեկին: Սանդրուժինայի շարքերից հեռացնելու իրավունքը վերապահվում է Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի ռայոնական կոմիտեյին— դրուժինայի հրամանատարի կամ քաղղեկի հայտարարությամբ:

71. Հրամանով տրված բոլոր քաջալերումները և տուժերը գրանցվում են դրուժինիկի անձնական գրքով:

15. ՀԵՌԱՅՈՒՄԸ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴՐՈՒԺԻՆԱՅԻ ՇԱՐՔՆԵՐԻՑ

72. Սանիտարական դրուժինայի շարքերից Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի ռայոնական կոմիտեյի վորոշմամբ դրուժինիկները հեռացվում են.

ա) Սանիտարական դրուժինայի կանոնադրությու-

նր սխառեմատիկ խախտողները՝ դրուժինայի վարչության կողմից վոչ պակաս մեկ նկատողություն, մյուս նախադգուշացումով խիստ նկատողություն ստացածները:

բ) Դատական մարմինների վճիռներով դատապարտվածները:

15. ՍԱՆԴՐՈՒԺԻՆԱՅԻ ԼՈՒԾԱՐՔԸ.

73. Համամիութենական համարներ ունեցող բոլոր սանիտարական դրուժինաները կարող են լուծարքի չենթարկվել միայն Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի գործկոմի կարգադրության համաձայն, կամ Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի գործկոմի կողմից նրանց անմիջապես հետադուսելու հիման վրա կամ Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի հանրապետական, յերկրային, մարզային և ճանապարհային կոմիտեների կողմից ներկայացված նյութերի հիման վրա:

74. Ձեռնարկների, հիմնարկների և ալյնի Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի սկզբնական կազմակերպություններին կից սանիտարական դրուժինաները լուծարքի չեն չենթարկվում որպեսզի պետի կարգադրության հիման վրա, համաձայնեցնելով այդ հարցը Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի ռալոնական կոմիտեի հետ:

16. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԴՐՈՒԺԻՆԱՆԵՐՈՒՄ

75. Յուրաքանչյուր դրուժինիկի համար պատրաստվում է անձնական գործ, վորի մեջ պետք է գտնվի՝

ա) Դրուժինիկի անձնական դիմումն իրեն դրուժինայի մեջ ընդունելու մասին:

բ) Դրուժինիկի կենսագրությունը:

գ) Բնութագիր աշխատանքի վայրից:

դ) Վկայական բժշկական քննության մասին:

76. Պատրաստումը ավարտած պահեստ բաց թողնելով՝ դրուժինիկի անձնական գործերը պահվում են առանձին, ըստ վորում գործի մեջ կատարվում է պահեստի մեջ բացթողման ժամանակի վերաբերյալ տեղեկանքը ատեստացիայի հետ միասին, ինչպես նաև տեղեկանքներ ներկա լինելու և կրկնակի հավաքների անցկացման մասին:

Դրուժինիկի ուրիշ ռալոն բնակվելու տեղափոխվելու դեպքում, նրա անձնական գործում կատարվում է նշում հաշվառումից հանելու մասին ցույց տալով տեղափոխման վայրը:

77. Ռալոնական կոմիտեի պահանջմամբ (վորտեղ մեկնած դրուժինիկը ընդունվում է հաշվառման) ուղարկվում է մեկնած դրուժինիկի անձնական գործի պատճեն, իսկ անձնական գործում կատարվում է նշում պատճեն ուղարկելու մասին:

78. Կանոնադրության համաձայն ձեվավորված յուրաքանչյուր սանիտարական դրուժինայի համար— նրա առաջին մեկ ամսվա աշխատանքի ընթացքում կազմվում է յերեք որինակից դրուժինայի հետադուսման ակտ, վորից մեկը մնում է Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի ռալոնական կոմիտեի գործերում, իսկ յերկուսը Կարմիր խաչի կամ Կարմիր Մահիկի մարզային կամ յերկրային կոմիտեն հաստատելու և դրուժինայի ձևավորման մասին Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի գործկոմին հայտնելու համար (այն հանրապետություններում, յերկրներում, վորտեղ կան մարզային բաժանմունքներ— ակտ ուղարկվում է ռոս որինակից, ըստ վորում ակտի մի պատճեն մնում է մարզային կոմիտեում, մյուսը ուղարկվում է յերկրային կամ կենտրոնական կոմիտեին և Յ-րդը՝ Կարմիր խաչի ու Կարմիր-Մահիկի գործկոմի մարզային, յերկրային, կենտրոնական, ինչպես նաև ճանապարհային

կոմիտեի նախագահության վորոշման քաղվածքի հետ միասին դրուծինան ընդունելու վերաբերյալ:

79. Համամիութենական համարը սանդրուծինան ստանում է Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի գործ-կոմի նախագահության կողմից: Համամիութենական համար տալու վերաբերյալ վկայականի պատճենն պահ-վում է համապատասխան մարզային, յերկրային և կենտրոնական կոմիտեներում:

80. Դրուծինիկներին պահեստ բաց թողնելուց հե-տո — դրուծինան վերաձևավորելիս Կարմիր խաչի կամ Կարմիր Մահիկի ռայոնական կոմիտեն 1/XI-ից հետո դարձյալ կատարում է հետազոտում և մինչև 1/XII-ը պարտավոր է ներկայացնել դրուծինիկների նոր կոնտիգենտի վեոաբերյալ ակտը: Այն դրուծինաները, վորոնց վերաձևավորելու ժամանակ ներկայացված են ակտեր մինչև 1/XII պահպանում են իրենց համա-միութենական համարները, իսկ 1/XII-ից հետո ու-ղարկված ակտերով համարները տրվում են հերթական կարգով:

81. Դրուծինայի ամբողջ գործունեության հաշ-վառման համար անհրաժեշտ է ունենալ՝

ա) Հրամանի գիրքը, վորտեղ գրանցվում են՝ դրու-ծինայի ձեվավորման դատան, դրուծինիկների բաժա-նումը ըստ ջոկերի և ողակների, հրամկազմի նշանա-կումները, դրուծինայի գծով յեղող կարգադրությունները ուսումնական և տակտիկական բովանդակությամբ, քաջալերումները, ծառայության բարձրացումները, ինչ-պես նաև տուժերը դրուծինիկների մարտական ու գործնական աշխատանքի և դրուծինիկների պահեստ բաց թողնումը առեստացիայով:

բ) Ուսումնական և հասարակական աշխատանքնե-րի որագիրը:

գ) Գործ—հրահանգների, ցուցմունքների, ուսում-նական պլանների, ծրագրերի և հաշվետվությունների պատճենները կարելու համար:

դ) Գույքամատյան.

82. Սանդրուծինայի աշխատանքների հաշվառու-մը անցկացվում է ԽՍՀՄ Կենտ. Ժողտնտհաշվարչու-թյան կողմից հաստատված ձևով:

83. Դրուծինայի ամբողջ գործավարությունը տար-վում է դրուծինայի հրամանատարի կողմից Կարմիր խաչի ու Կարմիր Մահիկի գործկոմի ցուցմունքների համաձայն:

ՍԱՆԴՐՈՒԹԻՆԱՅԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԲ №
Դրուծինայի անվանումը
ՀՐԱՄԱՆ № 1 ԱՌ „ „ 19 Թ.
. Բժթաղամասի սանդրուծինան
(ռայոնի, ձեռնարկի և ալն)

Համարել կազմակերպված
19 թ. ի „ „-ից
Դրուծինայի հրամանատար Գաղղել
(Ստորագրություն) (Ստորագրություն)
ՀՐԱՄԱՆ № 2 ԱՌ „ „ 19 Թ.

1-ին ջոկի հրամանատար նշանակվում է ընկ
2-րդ „ „ „ „ „ „ „ „
Ողակների հրամանատարներ են նշանակվում՝
1-ին ջոկի 1-ին ողակ ընկ
„ „ 2-րդ „ „ „ „ „ „
„ „ 3-րդ „ „ „ „ „ „
2-րդ „ 1-ին „ „ „ „ „ „
„ „ 2-րդ „ „ „ „ „ „
„ „ 3-րդ „ „ „ „ „ „
Հաղավորներ են նշանակվում ընկ
Դրուծինայի տնտեսութունը վարելու համար առանձնացվում է կազավոր ընկ

Դրուծինայի հրամանատար
(Ստորագրություն)
Գ ա ղ ղ ի
(Ստորագրություն)

ՍԱՆԴՐՈՒԹԻՆԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՈՐԱԳԻՐ

Ա մ ի ս ն ե ը	Հունվար, փետրվար, մարտ, ապրիլ
Հավաքն՝ որացուցային դատան	2, 8, 14, 20, 26
Պաշտոնը, ազգանունը	Նշում հավաքին ներկա լինելու մասին

1	Դրուժինայի հրամանատար
2	Քաղղեկ
3	1-ին ջոկի հրամանատար
4	1-ին ողակի հրամանատար
5	Ողակայիններ . . .
6	Ողակայիններ . . .
7	Ողակայիններ . . .
8	2-րդ ողակի հրամանատար
9	Ողակայիններ . . .
10	Կապավոր
11	Կապավոր

ՆՇՈՒՄՆԵՐ, ՍԱՆԴՐՈՒԹԻՆԱՅԻ ՍՏՈՐԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑԿԱԾ ԿԱՐՄԻՐԵԱԶՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անցկացվելիք աշխատանքի դատան	Աշխատանքի անցկացման վայրը (հիմնարկի, ձեռնարկի, բնակատանի և այլնի անունը	Վոր ստորաբաժանումն և անցկացրել աշխատանքը	Անցկացված աշխատանքի արդյունքները
-----------------------------	---	--	----------------------------------

ՆՇՈՒՄՆԵՐ ՀՈՊ ՎԱՐԺԱԿԱՆ ՅԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊՈՒՆԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄՆԵՐՈՒՄ ՍԱՆԴՐՈՒԹԻՆԱՅԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ուսուցումը անցկացնելու դատան	Ուսման մասնակցելու համար ներկա յեղող մարդկանց թիվը:	Շրջադրության (աբստանովիա) կարճ բովանդակությունը, բնութագրերը
------------------------------	---	--

ՍԱՆԴՐՈՒԹԻՆԱՅԻ ԳՈՒՑՔԱՄԱՅՅԱՆ

№ №	Առարկայի անունը	Դործածման ժամկետները	Ստացման դատան	Քանակը	Նշում վոչ պիտանի դարձածին դուրս գրելու մասին
-----	-----------------	----------------------	---------------	--------	--

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Հաղեցումները կամ հազուստեղներ յուրաքանչյուր առարկայի համար պետք և առանձնացված լինի առանձին թերթիկ:

Պատ. խմբագիր՝ Մ. Մանթաշյան
Տեխ. խմբագիր և սրբագրիչ՝ Վ. Խաչատրյան

614.88



Գլավխիտի լիազոր Ա.—1228. պատվեր 600, տիրաժ 2000

Հանձնված և արտագրության 15/VII 1940 թ.

Ստորագրված և տպելու 10/VIII 1940 թ.:

Հայկական ԽՍՀ ԺԿԽ-ին կից քերթերի և ամսագրերի
տպարան, Պեղևան.

«Ազգային գրադարան»



NL0270287

3448